ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 53/1

30-ը հունիսի 2021 թվականի

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հետազոտական գործունեության 2021-2026 թթ. ռազմավարությունը հաստատելու մասին:

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հետազոտական գործունեության 2021-2026 թթ. ռազմավարությունը՝ համաձայն հավելվածի:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝_____ Ա. Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված

Հաստատված է

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի

2021թ. հունիսի 30-ի նիստի թիվ 53/1 որոշմամբ

ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդի նախագահ Ա. Հ. Մակարյան

ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ 2021-2026 ԹԹ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղն ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, առավելապես փոխանցումը և տարածումն է հայագիտության, մշակույթի, հումանիտար, սոցիալ-տնտեսական և բնական գիտությունների ուղղություններով:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր գործունեությամբ նաև նպաստում է սահմանամերձ Տավուշի մարզի տնտեսական, սոցիալական և մշակութային կյանքի զարգացմանը: Մասնաճյուղը համարվում է առաջատար բարձրագույն ուսումնական հաստատություն Տավուշի մարզում. այն հնարավորություն ունի տարածաշրջանում դառնալու նաև նորարարական կենտրոն:

Ներկայումս ցանկացած կազմակերպության մրցունակությունն ուղղակիորեն կախված է նորարարությունների մշակման և ներդրման կարողությունից: Ազգային շուկայում տարածաշրջանի, իսկ միջազգային մակարդակում երկրի մրցունակությունը կախված է անընդհատ նորարարական գաղափարներ գեներացնելու և դրանք ներդնելու ունակությունից, իսկ վերջինս իր հերթին կախված

է մարդկանց նորարարական ներուժից և մարդկային կապիտալից: Այդպիսի կապիտալի ստեղծման համար ամենից առաջ պատասխանատու է կրթական համակարգը: Հետևաբար, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը կոչված է լինելու այնպիսի նոր գիտելիքների ստեղծողը, որոնք կարող են միաժամանակ նպաստել և՛ նորարարական գաղափարների մշակմանը, և՛ նորարարական գործունեության համար նոր սերնդի ու բարձր ներուժով օժտված կադրերի պատրաստմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն իր առջև դնում է հենց այդպիսի խնդիրներ: Դրանք ներառում են ինչպես գիտելիքի ստեղծման գործընթացի զարգացման, այնպես էլ այդ գիտելիքը տեխնոպարկերի, նորարարական տեխնոլոգիական կենտրոնների, խորհրդատվական ծառայությունների, նոր կրթական տեխնոլոգիաների կիրառման միջոցով տարածելու և առևտրայնացնելու հարցեր: Կրթությունն էլ այդ կերպ կկարողանա արագ արձագանքել աշխատաշուկայի պահանջներին:

Տավուշի մարզում վերոնշյալ նպատակների և դրանց իրականացմանը միտված գործընթացների համար իբրև ամուր հենակետ մենք դիտարկում ենք ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը՝ որպես նոր գիտելիքների տարածաշրջանային կենտրոն և նորարարական զարգացման, տեխնոլոգիական փոփոխությունների բյուրեղացման միջուկ: Նորարարական միջավայրի կարևորագույն տարրերից մեկն է մշակույթը, որի ներսում իրականացվող նորարարական գործընթացներն ունեն տարածաշրջանային զարգացման հսկայական ներուժ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն անհրաժեշտ է դիտարկել նաև որպես ստեղծագործական միջավայր, որի սոցիալ-մշակութային գործառույթն ամփոփվում է գիտելիքների և արժեքների ստեղծման, հայեցակարգերի, տեսությունների, մեթոդաբանությունների, տեխնոլոգիաների մշակման ու ձևավորման մեջ: Մասնաճյուղի՝ որպես բարձրագույն կրթական հաստատության առաքելությունը, անկախ մասնաճյուղ լինելու կարգավիճակից, որոշվում է հետևյալ հիմնադրույթով. այն դասական տիպի համալսարան է, որի գործունեության հիմնական նպատակը տարածաշրջանում կրթության, գիտության, մշակույթի և նորարարությունների

զարգացմանը նպաստելն է:

Պատմաաշխարհագրական, կլիմայական, տնտեսական և սոցիալ-մշակութային գործոններն ի նկատի ունենալով՝ Տավուշի մարզում առկա է հսկայական ներուժ այնպիսի ուղղությունների զարգացման համար, ինչպիսիք են ագրոարդյունաբերությունը, զբոսաշրջությունը, տեղեկատվական տեխնոլոգիաները: Իր գործունեության շնորհիվ մասնաճյուղը՝ ի դեմս իր շրջանավարտների, զգալի ներուժ է ձևավորել մարզի բնապահպանության, զբոսաշրջության և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտների հիմնախնդիրներին լուծումներ տալու նպատակով:

Մասնաճյուղի առաքելությունը չի սահմանափակվում միայն շուկայի պահանջներին համապատասխան կադրերի պատրաստմամբ, այլ այն ընդլայնվում է՝ ձեռք բերելով տարածաշրջանի աշխատաշուկայի վրա ակտիվորեն ազդելու գործառույթ, ինչպես նաև մարզի տնտեսական զարգացման առաջնահերթ ոլորտներում դառնալով աշխատատեղերի ստեղծման խթան: Դրան հասնելը հնարավոր է միայն կրթության, գիտության, մշակույթի և նորարարությունների սերտ համադրությամբ: Այս առումով, որպես կրթական հաստատություն, իր զարգացման տեսլականով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ***տարածաշրջանային նորարարական հետազոտական կենտրոն-համալսարանի*** մոդել պետք է դառնա:

Առավել զարգացած է համարվում այն տարածաշրջանը, որը լավագույնս է օգտագործում իր բնական, ինչպես նաև մարդկանց մի քանի սերունդների կյանքի ընթացքում աշխատանքով ստեղծված և կուտակված նյութական ու ոչ նյութական արժեքները (ռեսուրսները), այսինքն՝ **տնտեսական ներուժը**: Ցավոք, Տավուշի մարզում դա համակողմանի ուսումնասիրման և գնահատման չի ենթարկվել:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հետազոտական գործունեության զարգացումը, որը պայմանավորված է ՀՀ, մասնավորապես՝ Տավուշի մարզի տնտեսության արդիականացման ու մրցունակության բարձրացման գործընթացներում մասնաճյուղի իրական մասնակցության անհրաժեշտությամբ, նպատակահարմար է

իրականացնել մարզի գերակա ոլորտներում առկա հիմնախնդիրների ուսումնասիրության ուղղությամբ:

Ռազմավարության նպատակն ու խնդիրները

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում հետազոտական գործունեության նպատակն է.

- գիտական հետազոտությունների և մշակումների իրականացման միջոցով նպաստել Տավուշի մարզի ագրոարդյունաբերության և սոցիալ-մշակութային զարգացմանը,
- ապահովել կրթության և գիտական գործունեության ինտեգրումը,
- գիտական և արտադրական տարբեր կազմակերպությունների հետ նախաձեռնել և իրականացնել միջոլորտային հետազոտություններ,
- ապահովել գիտական լայն շրջանակներում մասնաճյուղի դասախոսների գիտական նվաճումների տարածումը:

ԵՊՀ ԻՄ-ում հետազոտական գործունեության խնդիրներն են.

- մասնաճյուղի գիտանորարարական ենթակառուցվածքների հաստատուն զարգացումը,
- մարզի զարգացմանը նպաստող հետազոտությունների ձեռնարկումը և իրականացումը,
- հետազոտական գործունեության նորարարական բնույթի ապահովումը և Տավուշի մարզում նորարարական զարգացման գեներատորի դերի ստանձնումը,
- հետազոտության արդյունքների առևտրայնացումը,
- թողարկված հետազոտական արտադրանքի որակի պարբերական բարձրացումը,
- արտաքին աղբյուրներից ֆինանսական միջոցների ներգրավումը,
- նմանատիպ կենտրոնների հետ կապերի հաստատումը,

- կատարված հետազոտությունների արդյունքների տարածումը հիմնական շահակիցների շրջանում և համացանցում,
- կրթական ծրագրերում հետազոտության իրականացման (որպես ուսուցման մեթոդ) ներդրումը մասնագետների պատրաստման բոլոր փուլերում,
- գիտական դպրոցների, ժամանակակից գիտահետազոտական բազայի, բարձր որակավորման կադրերի պատրաստման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը:

Ռազմավարական խնդիրների լուծման հիմնական ուղիները և մշակվելիք կառուցակարգերն են.

- հետազոտական գործունեության նորարարական բնույթի ապահովման և Տավուշի մարզում նորարարական զարգացման գեներատորի դերի ստանձման նպատակով նորարարական զարգացման հայեցակարգի մշակումը,
- ներբուհական դրամաշնորհային մրցույթների անցկացումը՝ առավելություն տալով Տավուշի մարզի ագրոարդյունաբերության, բնապահպանության և զբոսաշրջության ոլորտի հիմնախնդիրներին առնչվող, ինչպես նաև Տավուշի մարզի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքին վերաբերող թեմաներին,
- շահառուների համար դասընթացների կազմակերպումը, տարածաշրջանի ագրոարդյունաբերական համալիրի ներկայացուցիչների համար խորհրդատվական ծառայությունների մատուցումը,
- արտասահմանյան առաջատար ամսագրերում գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումների թվի ավելացման նպատակով «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար

վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման» կարգի կատարելագործումը,

- մասնաճյուղում իրականացվող նորարարական հետազոտական աշխատանքների արդյունքների հիման վրա փոքր ձեռնարկությունների կազմակերպումը, որոնք կապահովեն մասնաճյուղի հետազոտության և զարգացման արդյունքների իրացումը,
- գիտական հետազոտությունների մշտադիտարկման ու արդյունքների գնահատման համակարգի մշակումը և ներդրումը,
- «Տավուշ» հետազոտական կենտրոնի ֆեսբուքյան էջի ու պաշտոնական կայքէջի ստեղծումը և կառավարումը,
- գիտական հետազոտությունների զարգացման համար բոլոր մակարդակների բյուջեներից, հիմնադրամներից, ընկերություններից և մասնավոր ներդրողներից միջոցների ներգրավման ակտիվացումը, մասնաճյուղի եկամտի մինչև 3% հատկացումների ապահովումը,
- այլ ուղեղային կենտրոնների հետ համատեղ հետազոտությունների իրականացումը, խորհրդատվությունների և սեմինարների կազմակերպումը,
- հետազոտական գործունեության արդյունքների հանրայնացումը (տեղեկատվական բուկլետներ և օժանդակ ուղեցույցներ), էլեկտրոնային գիտական ամսագրի ստեղծումը,
- հետազոտական գործունեության մեջ դասախոսների և ուսանողների ներգրավման գործող համակարգի կատարելագործումը,
- մասնաճյուղի գիտական դպրոցների ձևավորումը, դրանց նյութական հենքի ամրապնդման համակարգի ստեղծումը, երիտասարդական գիտական կազմակերպությունների ստեղծումը և աջակցությունը, նոր հետազոտական լաբորատորիաների, հետազոտական և արտադրական կենտրոնների ստեղծումը, այդ թվում՝ գիտահետազոտական ինստիտուտների և կենտրոնների հետ համատեղ:

<u>Ռազմավարության իրականացման ակնկալվող արդյունքներն են.</u>

Ռազմավարության հաջող իրականացման դեպքում կարելի է ակնկալել.

- մասնաճյուղի գիտահետազոտական ենթակառուցվածքների աճ՝ տարեկան առնվազն մեկ հետազոտական լաբորատորիա կամ կենտրոն,
- մարզի զարգացմանն ուղղված տարեկան առնվազն 3 հետազոտական թեմայի ֆինանսավորում՝ ներքին դրամաշնորհային ծրագրերով,
- կրթական ծրագրերում հետազոտական բաղադրիչի խնդիրների համապատասխանեցում իրականացվող հետազոտությունների թեմաներին,
- միջազգային վարկանիշային ամսագրերում մասնաճյուղի դասախոսների գիտական հետազոտությունների արդյունքների հրապարակումների քանակի տարեկան առնվազն 10% աճ,
- կանոնավոր գործող էլեկտրոնային գիտական ամսագիր,
- արտաքին աղբյուրներից և դրամաշնորհներից, գիտական արդյունքների ապրանքայնացումից ֆինանսական միջոցների աճ՝ առնվազն բյուջեից կատարվող ծախսերի չափով,
- հետազոտական և ուղեղային կենտրոնների հետ կամ դրանց ներգրավմամբ համատեղ իրականացվող տարեկան առնվազն մեկ հետազոտություն,
- գիտական և արտադրական կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող տարեկան առնվազն մեկ միջոլորտային հետազոտություն։